

«Եւ զի ընդ Արիստոտելի գովելի գոյով գե-
ղեցիկքն եւ պարսաւելի՝ գարշելիքն, նմին իրի եւ
բնաւ իսկ գոյք՝ հանդիպեալք էութեան, մշտա-
փափաք եռանդիւք, առ ի գիւտ բաղձալի գե-
ղեցիկին՝ տաժանաբար վշտագնին: Զի զինչ եւս
անհանդուրժաբար տանջիչ առն՝ բղձալոյն սիրողի՝
եթէ ոչ՝ տարաձգութիւն բաղձալոյն՝ յոյով
միջոցիւք: Այլ արդ՝ ո՞րք ներ բանականաց՝ հաւ-
աստեաւ քաջածանօթ իւրոյ բաղձալոյն եւ ի
տարաձգիւն յայնմանէ՝ ոչ վարանեալ սուղեցի
մտաւանջութեամբ: Այլ որ միանգամ որ իսկա-
պէս յառաջածանօթ եղև իւրոյ բղձալոյն՝ ի
վրիպիւն յայնմանէ՝ հաւաստեաւ աներջանիկ զան-
ձըն վարկանի. որպէս եւ աստուածայինն Գաւիթ,
որ թեպէտ եւ իշխանաշքեղ պետութեամբն
քան զայլովս էր գերազանցեալ, այլ մինչ
մտաբերէր՝ զինքն յբղձալի տեսութենէն Աստուծոյ
տարանջատեալ՝ տառապիւր սաստկապէս, ասելով,
Զայս որպէս յիշէի տարապիւր յիս անձն իմ, եւ
թէ, ե՞րբ եկից երեւեցայց երեսացդ Աստուծոյ:
Եւ որ յագեալն էր կենցաղականիս պերճութեամբ,
գիտելով եթէ զբաղումն են յօժարութեան, ըստ
Սողոմոնի, որպէս զսովեալ որ՝ յագեցութեան
փափագիւր ասելով, Յագեցայց յերեւիլ փառաց